Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2021 թ.
հունվարի 8 -ի N 3 - Ա
որոշման

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«Իջևանի թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի 3-րդ մասնաշենքի վերանորոգում»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է վերանորոգել Իջևանի թիվ 1 մանկապարտեզի 3-րդ մասնաշենքը, որի արդյունքում հարմարավետ պայմաններ կստեղծվեն մանկապարտեզի 180 սաների առօրյան կազմակերպելու համար:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Հայ Օգնության Ֆոնդ, Նյու Յորք, ԱՄՆ
4.	Ծրագիրը կատարողը	Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան 0010, Խորենացու փող. 22, ՀՎՀՀ 02517115
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայրը՝ ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, Մայիսի 28-ի փ., շ. 5/2 Բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է $184,945.24 (հարյուր ութսունչորս հազար ինը հարյուր քառասունհինգ ԱՄՆ դոլար քսանչորս ցենտին) համարժեք դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Իջևանի թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Սկիզբ՝ դեկտեմբերի 26, 2020 թ. Ավարտ՝ մայիսի 31, 2021 թ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է վերանորոգել Իջևանի թիվ 1 մանկապարտեզի 3-րդ մասնաշենքը:

		Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է $184,945.24 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: Իրականացվելիք շին-վերանորոգման աշխատանքների մանրամասն ծավալներն ներկայացված են պայմանագրին կից հավելվածում: Աշխատանքները նախատեսվում է ավարտել մինչև մայիս 31, 2021 թ.:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում $184,945.24 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի չափով, պայմանագիր կնքված 25.11.2020 թ. Հայ օգնության ֆոնդի (ՀՀ, ք. Երևան 0010, Խորեացի 22, ՀՎՀՀ 02517115) և «Կանակա» ԲԲԸ (ՀՀ, ք. Վանաձոր 2022, Նժդեհի փողոց 4, ՀՎՀՀ 06901369) միջև:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագիրը չի նախատեսում կազմակերպական ծախսեր:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Սույն ծրագրի իրականացման շրջանակներում ՀՕՖ-ը համագործակցելու է Տավուշի մարզպետարանի և Իջևանի համայնքապետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկողությունը կատարվելու է ՀՕՖ-ի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ